

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ  
VICTOR AMBARTSUMIAN

«Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ և գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է...»

“Not the blood but the ideas we hand down to the next generations, and the Armenian language is the most valuable for me among these ideas...”



«Այս հարյուրամյակի աստղագետներից միայն պրոֆեսոր Յան Օորտը կարող է համեմատվել ակադեմիկոս Համբարձումյանի հետ աստղագիտության հանդեպ իր հաստատուն նվիրվածությամբ, չնայած մնացած ամեն ինչում նրանք տարբեր են իրարից: Քսանմեկերորդ դարի գիտության պատմաբանների համար արժեքավոր թեմա կլինի այդ երկու խոշոր գիտական այրերի համեմատումն ու համադրումը»: Այս խոսքերը պատկանում են Նոբելյան մրցանակակիր Սուբրամանիան Չանդրասեկարին՝ քսաներորդ դարի մեկ այլ հայտնի ֆիզիկոսին և աստղաֆիզիկոսին:



Յան Օորտի հետ, 1966թ.  
With Jan Oort, 1966

The only other astronomer of this century who compares with Academician Ambartsumian in his constancy and devotion to astronomy is Professor Jan Oort, but they would appear to be dissimilar in every other way. It will be a worthy theme for a historian of science of the twenty-first century to compare and contrast these two great men of science". These words belong to Subrahmanian Chandrasekhar - famous physicists and astrophysicists of 20th century, a Nobel Prize winner.



Քրոջ՝ Գոհարիկի և եղբոր՝  
Լևոնի հետ, 1913թ.  
With the sister Gaharik and brother  
Levon, 1913



Վիկտոր Համբարձումյանը ծնվել է 1908 թվականին Թբիլիսիում: Նրա հայրը՝ Համազասպ Համբարձումյանը առաջինն էր հայտնաբերել որդու հետաքրքրությունը թվաբանական հաշվարկների հանդեպ: Երբ Վիկտորը 4 տարեկան էր, կարողանում էր հեշտությամբ բազմապատկել երկնիչ թվերը: Թվերի անսահման աշխարհի հանդեպ նրա սերը շուտով նրան տարավ դեպի աստղագիտություն, դեպի անսահման Տիեզերքի օբյեկտները, և 1920-21 թվականներից նա կարդում էր աստղագիտության վերաբերյալ ձեռքն ընկած բոլոր գրքերը:

Victor Ambartsumian was born in 1908 in Tbilisi, Georgia. His father - Hamazasp was the first to discover son's interest to the arithmetical calculations. When Victor was 4 he could easily multiply two-digit numbers. His love to unlimited world of numbers led him very soon to the astronomy, to the objects of unbounded Universe, and since 1920-21 he was reading all the books he could find on astronomy.

1924 թվականին նա մեկնեց Լենինգրադ, որպեսզի ընդունվի Լենինգրադի պետական համալսարան: Նրա գիտական հետազոտություններն սկսվեցին շատ վաղ և նա իր առաջին գիտական հոդվածը հրատարակեց, երբ ընդամենը 18 տարեկան էր: Հետագայում նա մի քանի հարյուր գիտական աշխատանք հրատարակեց բավականին լայն բնագավառներում՝ ատոմային միջուկի ֆիզիկայից մինչև աստղային դինամիկա, ճառագայթման տեղափոխման խնդիրներ, աստղային ու գալակտիկական կոսմոգոնիա և այլն: Ստորև թվարկված են նրա առավել նշանակալից արդյունքները:

In 1924 he moved to Leningrad for entering the Leningrad State University (LSU). His scientific researches started very early and he published his first paper when he was only 18. Later on he published several hundreds of papers in a rather wide field of activity - from physics of atomic nuclei to stellar dynamics, radiation transfer problems, stellar and galactic cosmogony etc. The most prominent results are enumerated below.

1. Առաջին անգամ սեփական արժեքներին համապատասխանող դիֆերենցիալ հավասարման տեսքը գտնելու փորձ է արվել: Առաջին անգամ ձևակերպվել է Շտուրմ-Լիուվիլի խնդրին հակադարձ խնդիր, որը հետագայում դարձավ նմանատիպ հակադարձ խնդիրների հետազոտության մի ամբողջ ուղղության սկիզբ (1929 թ.):



Պուլկովոյում, կենտրոնում Ս.Չանդրասեկարն է, ձախից երկրորդը՝ Ն. Կոզիրևը

At the Pulkovo observatory, S.Chandrasekhar is in the center and N.Kozirev is the second from left

For the first time the problem of finding the differential equation corresponding to the known family of eigenvalues was solved. For the time a problem inverse to Sturm-Liouville's problem was formulated, which later became a starting point to create an entire field of analogical class inverse problems (1929).

2. Առաջ է քաշվել գաղափար, ըստ որի ոչ միայն էլեկտրամագնիսական դաշտի քվանտները՝ ֆոտոնները, այլև մյուս



մասնիկները (այդ թվում հանգստի ոչ գրոյական զանգված ունեցողները) կարող են ծնվել և ոչնչանալ այլ մասնիկների հետ փոխազդեցության հետևանքով (այդ գաղափարն ընկած է տարրական մասնիկների ժամանակակից ֆիզիկայի և դաշտի քվանտային տեսության հիմքում) (Դ.Դ. Իվանենկոյի հետ համատեղ, 1930 թ.):



Խարկովի Ֆիզիկա-տեխնիկական ինստիտուտ, տեսական ֆիզիկայի սեմինար, 1929թ.

Kharkov Physical-technical Institute, Seminar on theoretical physics, 1929

An idea that not only the quanta of the electromagnetic field, photons, but also other particles (including particles having non-zero rest mass) may be born and disappear as a result of their interaction with other particles (this idea lays in the basis of modern physics of the elementary particles and quantum field theory) (together with D.D. Ivanenko, 1930).

3. Ապացուցել է ատոմային միջուկներում ազատ էլեկտրոնների գոյության անհնարինությունը: Ցույց է տրվել, որ բացի պրոտոններից միջուկներում կարող են լինել գրեթե նույն զանգվածի էլեկտրաչեզոք մասնիկներ: Դրանից երկու տարի անց



Ջեյնս Չեդվիկը հայտնագործեց նեյտրոնը (Գ.Գ. Իվանենկոյի հետ համատեղ, 1930 թ.):

The impossibility of existence of free electrons in the atomic nuclei was proved. It was shown that only electrically uncharged elementary particles of approximately proton mass could exist together with protons in nuclei. Two years later James Chadwick discovered the neutron (together with D.D. Ivanenko, 1930).

4. Առաջին անգամ հետազոտվել է կենտրոնական աստղի լույսի ձնշման ազդեցության տակ մոլորակաձև միգամածությունների լայնացման մեխանիզմը: Ցույց է տրվել, որ լույսի ձնշման հետևանքով այդ միգամածությունները լայնանում և ցրվում են տարածության մեջ և որ դրանք չեն կարող գոյատևել 100000 տարուց ավելի, եթե աստղից անընդհատ արտահոսք չկա: Առաջին անգամ ձևավորվել է տիեզերական ավելի խիտ նյութից ավելի նոսր օբյեկտների առաջացման պարադիգմը (1932 թ.):



Իր աշակերտի և ընկերոջ, հետազայում  
ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Վ. Սոբոլևի հետ  
With his student and friend V. Sobolev  
- a member of the USSR Academy of sciences

For the first time the influence of the light pressure on the planetary nebulae dynamics was studied. The new result on the expansion and dissipation of planetary nebulae owing to light pressure was obtained. It was shown that the age of planetary nebulae could not exceed 100000 years if no continuous outflow existed from the central star. For the first time the new evolutionary paradigm on formation of objects from denser matter was formulated (1932).



Մոլորակաձև միգամածություն  
Planetary nebula

5. Առաջարկել է մոլորակաձև միգամածությունների կենտրոնական աստղերի մակերևութային ջերմաստիճանների որոշման նոր եղանակ (Չանստրայի եղանակի զարգացումը) ու տվել կարճալիք ֆոտոնների վերափոխման հավանականային ձևակերպումը, որը հանգեցնում է մոլորակային միգամածությունների ճառագայթային հավասարակշռության սահմանմանը (1932 թ.):

New method (modification of Zanstra's method) for determination of the planetary nebulae's central stars surface temperature giving the probabilistic definition of short wave energetic photons transformation into less energetic ones. This definition led to the radiative equilibrium determination (1932).

6. Առաջին անգամ գնահատվել են Նոր և Գերնոր աստղերի կողմից արտանետվող նյութի քանակը և թաղանթների զանգվածները: Ստացվել է մինչև օրս օգտագործվող գնահատականը, ըստորի Նորի բռնկման ժամանակ արտանետվում է 0.00001 Արեգակի զանգվածով, իսկ Գերնորերը դուրս են շարժում Արեգակի մեկ զանգվածին հավասար նյութ (Ն.Ա. Կոզիրևի հետ համատեղ, 1933 թ.):



Ընկերոջ Ն.Կոզիրևի հետ  
With his friend N.Kozirev



For the first time the amount of matter and masses of envelopes ejected due to the Novae and Supernovae explosions was estimated. Presently known values of 0.00001 and 1 solar masses for Novae and Supernovae phenomena have been found, respectively (together with N.A. Kozirev, 1933).

7. Աստղերի տեսագծային արագությունների և երկնային կոորդինատների միջոցով առաջին անգամ արտածվել է նրանց տարածական արագությունների բաշխման ֆունկցիան, որը հանգեցվել էր Ռադոնի հակադարձ ձևափոխություն կատարելուն: Չորս տասնամյակ անց այդ նույն մաթեմատիկական ապարատը կիրառվեց տոնոգրաֆների ստեղծման և շահագործման նպատակով (1936 թ.):

For the first time the distribution function of stellar 3D velocities has been obtained only using radial velocities and coordinates of stars. This problem has been reduced to the numerical inversion of the Radon transform. Four decades later the same mathematical scheme was applied for the construction and exploitation of computer tomography (1936).



Գնդաձև աստղակույտ  
Globular cluster

8. Ցածր գալակտիկական լայնություններում սպիտակ աստղերի ուսումնասիրության միջոցով ցույց է տրվել սպիտակ թզուկ աստղերի բազմաքանակությունը Գալակտիկայում, ինչը հետագայում ապացուցվեց մեծ քանակով սպիտակ թզուկների հայտնաբերմամբ (Գ.Ա. Շայնի հետ համատեղ, 1936):





By means of investigation of white stars at low Galactic latitudes, the existence of a great number of white dwarf stars in the Galaxy was shown, which was later proved by discoveries of a large number of white dwarfs (together with G.A. Shain, 1936)



Ընտանիքի անդամների հետ, առաջին շարքում են հայրը Համագասպ Համբարձումյանը, մայրը Հռիփսիմե Համբարձումյանը և կինը Վերա Համբարձումյանը

With the family members: in the first row father Hamazasp Ambartsumian, mother Hripsime Ambartsumian and wife Vera Ambartsumian

ղակի»՝ 1013 տարի) սխալ լինելը և ապացուցվել «Ժամանակի կարճ սանդղակի» ճշմարտացիությունը (1936-1937 թթ.):

Using the statistical studies of wide binaries it was shown for the first time that those did not obey the dissociative equilibrium conditions. The same studies allowed arriving at a conclusion that the components of binaries had been formed jointly. Moreover, the observed distribution put an upper limit for the Galaxy age, 10 billion years. This proved incorrectness of the generally accepted estimate of the age of our Galaxy obtained by James Jeans (so-called "long scale", 1013 years) was shown and a new estimate of its age was given (so-called "short scale") (1936-1937).


10. Մշակվել են աստղային համակարգերի վիճակագրական մեխանիկայի հիմունքները: Բացահայտվել է բացաստղակույտերի

9. Լայն աստղագույգերի վիճակագրական հետազոտությանը առաջին անգամ ցույց է տրվել, որ դրանք հեռու են դիսկոնա-տիկ հավասարակշռությունից: Դա թույլ է տվել ապացուցել, որ աստղագույգերի բաղադրիչներն առաջացել են համատեղ և որ դիսկոնա-բաշխումը վերին սահման է դնում Գալակտիկայի տարիքի վրա՝ 10 մլրդ տարի: Դրանով ցույց է տրվել Գալակտիկայի տարիքի մինչ այդ գերիշխող Ջեյմս Ջինսի գնահատականի («Ժամանակիերկարսանդղակի»՝ 1013 տարի)



«գոլորշացման» մեխանիզմը, ինչը թույլ է տվել առաջին անգամ գնահատել դրանց կիսատրոհման պարբերությունը (ցույց է տրվել, որ աստղակույտերը տրոհվում են 1 մլրդ տարվա ընթացքում), կանխագուշակել թզուկ աստղերով աստղակույտերի աղքատացման պրոցեսը: Այս հետազոտությունը այն հիմքերից մեկն էր, որ թույլ տվեց Գալակտիկայի ընդունված տարիքը պակասեցնել երեք կարգով և գործածության մեջ դնել Գալակտիկայի տարիքի «կարճ սանդղակը» (1938 թ.):

Principles of statistical mechanics of stellar systems were invented. The mechanism of star “evaporation” from the open stellar clusters was revealed. Using of this effect allowed to find for the first time the halftime of disintegration of the clusters, and was applied to anticipate the gradual decrease of the number of low mass stars in clusters. It was proven that open star clusters disintegrate during about 1 billion years, and predict the process of impoverishment of the clusters with dwarf stars. These studies provided a theoretical base for decreasing the accepted age of the Galaxy for a thousand times and for introducing “the short scale” of the Galaxy age (1938).



Ծիր Կաթին Milky Way

11. Միջաստղային կլանող նյութի (Ծիր Կաթնի փոշային բաղադրիչի) բնույթի և պատահաձև կառուցվածքի բացահայտումն ու առանձին ամպերի կլանման միջին չափի գնահատումը: Առաջին անգամ ցույց տրվեց, որ այդ ամպերը միջինում կլանում են 0.2 աստղային մեծության չափով (Շ.Գ. Գորդելաձեի հետ համատեղ, 1938 թ.):



The nature and patchy structure of the interstellar absorbing matter (dust component of the Milky Way) was revealed and the mean absorption of individual clouds was estimated to be equal to 0.2 magnitudes (together with Sh.G. Gordeladze, 1938).



Ժան-Կլոդ Պեկերի գծանկարի հիմքում ընկած է Ինվարիանտության սկզբունքի գաղափարը

Jean-Claude Pecker's picture shows the idea of the Principle of Invariance

12. Պղտոր միջավայրում լույսի ցրման նոր տեսության Ինվարիանտության տեսության, մշակումը: Ճառագայթման տեղափոխման խնդիրների լուծման նպատակով առաջարկել է Ինվարիանտության սկզբունք: Այն պարզ ֆիզիկական դատողությունը, որ կիսասանվերջ հարթ-գուգահեռ միջավայրին նույն հատկություններով բարակ շերտի ավելացումը չի փոխում նրա անդրադարձման հատկությունները, հիմք հանդիսացավ հետազոտական նոր մոտեցման ստեղծման համար (1941-1942 թթ.):

Development of light scattering theory in turbid medium, theory of Invariance. The Invariance principle was proposed for solving the radiative transfer problems. A very simple physical reasoning that the reflection properties of the semi-infinite plane-parallel medium do not change if a very thin layer of the same physical properties is added to its boundary gave an excellent base for creation of a new research method (1941-1942).

13. Ծիր Կաթնի պայծառության ֆլուկտուացիաների տեսությունը, որը կարող է սահմանվել շատ պարզ ձևակերպմամբ՝ անվերջ օպտիկական հաստության սահմանային դեպքում Ծիր Կաթնի պայծառության ֆլուկտուացիաների բաշխումն ինվարիանտ է դիտողի դիրքի նկատմամբ (1944 թ.):

The theory of the fluctuations in brightness of the Milky Way was formulated. In the simplest form it asserts that the probability



distribution of fluctuations in the brightness of the Milky Way is invariant to the location of the observer (1944).

14. Աստղասփյուռների՝ ջերմ հսկաների և T Ցուլի տիպի աստղերի խմբավորումների, հայտնագործումը: Առաջին անգամ ցույց տրվեց, որ աստղերն առաջանում են Գալակտիկայի էվոլյուցիայի բոլոր փուլերում, այդ թվում նաև ներկայումս, և որ աստղառաջացումն անընդհատ պրոցես է: Ցույց տրվեց, որ աստղերն առաջանում են ոչ թե առանձին-առանձին, այլ՝ խմբերով (1947 թ.):

Discovery of stellar associations, groups of hot giants and T Tauri stars. It was shown for the first time that the star formation process continues at all stages of the evolution of our Galaxy, including the present one and that the star formation is a permanent process. A conclusion was drawn that stars are formed not individually, but in groups (1947).



Առաջին հայտնի աստղասփյուռներից մեկը  
One of first known stellar associations

15. Աստղասփյուռների ընդարձակման երևույթի տեսական կանխագուշակումը: Օրիոնի Տրապեցիայի տիպի համակարգերի վիճակագրությունը և երիտասարդ աստղային համակարգերի քայքայման ապացույցը (Բ.Ե. Մարգարյանի հետ համատեղ, 1949-1951 թթ.):



Միջազգային Աստղագիտական Միության Գործադիր Կոմիտեն Հռոմում, 1952թ.

The Executive Committee of the International Astronomical Union in Roma, 1952

Theoretical prediction of the phenomenon of expansion of stellar associations. Statistics of the Trapezium Orionis type systems and a proof of disintegration of the young stellar systems (together with B.E. Markarian, 1949-1951).

16. Ապացուցել է անկայուն աստղերի սպեկտրներում դիտվող անընդհատ առաքման ոչ ջերմային բնույթը և առաջ է քաշել գաղափար աստղային ճառագայթման էներգիայի նոր հնարավոր աղբյուրների վերաբերյալ՝ նախաստղային գերխիտ նյութի մասին վարկածը (1954 թ.):

Showed the nonthermal nature of the continuous emission observed in the spectra of non-stable stars and put forward an idea about new possible sources of stellar energy, the hypothesis of the superdense protostellar matter (1954).

17. Գալակտիկաների միջուկների ակտիվության գաղափարը: Առաջին անգամ ուշադրություն հրավիրվեց ակտիվության տարբեր ձևերին, դրանք մեկնաբանելով իբրև միջուկի ֆիզի-



կական ակտիվության երևույթի տարբեր դրսևորումներ: Տույց տրվեց գալակտիկաների միջուկների ակտիվության էվոլյուցիոն նշանակությունը և առաջարկվեց վարկած միջուկների ակտիվության շնորհիվ նոր գալակտիկաների ծնման վերաբերյալ: Նոր զարգացում ստացավ նախաստղային գերխիտ նյութի վերաբերյալ վարկածը (1956 թ.):

The hypothesis on the activity of galactic nuclei was proclaimed. The various forms of activity were presented as different manifestations of the same phenomenon of activity. The evolutionary significance of the activity in the galactic nuclei was emphasized and a further hypothesis was suggested on the ejection of new galaxies



Հայտնի M51 գալակտիկան  
Famous Galaxy M51

from the active galactic nuclei. The hypothesis on the superdense protostellar matter was engaged to explain the observational data (1956).

18. Գերխիտ այլասերված աստղային կոնֆիգուրացիաների տեսական հետազոտությունը, բարիոնային աստղերի տեսության հիմունքների մշակումը, որը հետագայում թույլ տվեց բարձրացնել աստղային զանգվածների համար Չանդրասեկարի ստացած սահմանը (Գ.Ս. Սահակյանի հետ համատեղ, 1960-1961 թթ.):

Theoretical studies of the hypothetical superdense degenerate protostellar matter: development of principles of the theory of baryonic stars, which allowed a detailed research of physical conditions in superdense stellar conditions in the frame enabled by the modern knowledge of physics. These researches later on allowed increasing the Chandrasekhar limit of stellar masses (together with G.S. Saakyan, 1960-1961).



19. Բռնկվող աստղերի վիճակագրական հետազոտությունները. առաջարկվեց աստղային համակարգում բռնկվող աստղերի ընդհանուր թվի գնահատման մեթոդ՝ հիմնված այդ համակարգում արդեն հայտնի բռնկվող աստղերի դիտումների վրա: Արդյունքում պարզվեց բռնկումային ակտիվության օրինաչափ բնույթը ցածր լուսատվության և փոքր զանգվածով ուշ դասի աստղերի համար: Ապացուցվեց, որ այդ դասի աստղերն իրենց երիտասարդության վաղ փուլերում անպայմանորեն անցնում են բռնկումային ակտիվության փուլով (1968 թ.):



Բազումք աստղակույտը, որը գրեթե ամբողջությամբ բաղկացած է բռնկվող աստղերից  
The stellar cluster Pleiads. Almost all the members of this cluster are flare stars

Statistical studies of the flare stars revealed their evolutionary status: a method for estimation of the total number of flare stars in a star system based on the number of the observed flares. The flare activity was shown to be the regular stage in the evolutionary path of the low luminosity and low mass late-type stars. It was proved

that all the stars of the mentioned category necessarily pass through the stage of flare activity in the early phases of their evolution (1968).

20. Բռնկվող աստղերի հայտնաբերման ժամանակագրության (առաջին բռնկումների) և հաստատման (երկրորդ բռնկումների) հիման վրա տվյալ աստղային համակարգում բռնկումների միջին հաճախականության բաշխման ֆունկցիայի դուրսբերումը հակադարձ խնդրի եղանակով (1978 թ.):



Obtaining an original solution of the inverse problem of derivation of the distribution function of average frequencies of flares in the given stellar system on the basis of chronology of discovery (first flares) and confirmation (second flares) of the flare stars (1978).



Համբարձումյանն այլոց համար նոր հետազոտական բնագավառներ բացող առաջամարտիկ էր: Նրա հոդվածները մինչև օրս կարող են օրինակ ծառայել, թե որքան նրբաճաշակ և պարզ կարող են ներկայացվել նույնիսկ ամենաբարդ գաղափարները: Իր կյանքի արդեն ուշ շրջանում, երբ նա արդեն հայտնի գիտնական էր և մի անգամ իր փորձառությունն էր կիսում երիտասարդ աստղագետների հետ, նա խոստովանել է. “Երբեմն բավականին հաջող հետազոտություններ նոր ուղղություններ են բացել, բայց երբեք նույն հաջողությամբ չեն զարգացրել ու ավարտել դրանք”:

Ambartsumian was a pioneer to open new research fields for others. And his papers up to now can serve as examples how elegant and simple could be presented even the most complicated ideas. In later life when he was a famous scientist and was sharing once his experience with young astronomers, he confessed: “Sometimes I was lucky to open new directions for research but I never continued to pull out everything possible from it”.

1934 թվականին նա իր հարազատ համալսարանում հիմնադրեց Խորհրդային Միությունում առաջին աստղաֆիզիկայի ամբիոնը և դարձավ դրա վա-



Կանբերայի համալսարանի պատվավոր դոկտոր  
Honorary Doctor of the Canberra university





րիչը: 31 տարեկանում ընտրվեց Խորհրդային գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ: Նույն տարի նա նշանակվեց Լենինգրադի պետական համալսարանի պրոռեկտոր գիտական աշխատանքների գծով:

In 1934 he founded the first in the Soviet Union Department of Astrophysics in his alma mater and became the head of this new Department. At the age 31 he was elected to the Soviet Academy of sciences as a corresponding member. The same year he was appointed the Deputy President of the LSU responsible for scientific activity.



1943 թվականին Վ.Համբարձումյանի կյանքում նոր փուլ սկսվեց, նա ընտանիքով տեղափոխվեց Հայաստան և նշանակվեց Հայաստանի գիտությունների նորաստեղծ ակադեմիայի փոխպրեզիդենտ: 1946 թվականին նրա նախաձեռնությամբ հիմնադրվեց Բյուրականի աստղադիտարանը: 1947 դարձավ Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ և այդ պարտականությունները կատարեց մինչև 1993 թվականը:



In 1943 a new stage in V. Ambartsumian's life began: he moved to Armenia with his family and occupied the post of the Vice-President in the new established Armenian Academy of Sciences (AAS). In 1946 the Byurakan Astrophysical Observatory was founded by his initiative. In 1947 he became the President of the AAS and held this responsibility up to 1993.



1961 թվականին նա ընտրվեց Միջազգային Աստղագիտական Միության (ՄԱՄ) պրեզիդենտ և վիթխարի ճիգեր էր գործադրում, որպեսզի բարելավեր դրա գործունեությունը: Պրոֆեսոր Ժան-Կլոդ Պեկերը, որն այդ ժամանակ հանդիսանում էր ՄԱՄ-ի Գլխավոր քարտուղարի օգնականը, հիշում է. «Պրոֆեսոր Համբարձումյանի խելամիտ, հումորով առլեցում վերաբերմունքն անհնար է մոռանալ: Նա շատ մեծ ազդեցություն ուներ աշխարհի աստղաքաղաքականության վրա: Իմ սերնդի բոլոր աստղագետներն այդ ժամանակաշրջանը յուրատեսակ կարոտախտով են հիշում»: 1964 թվականին նա ավարտեց ՄԱՄ-ի իր պրեզիդենտության երեք տարին, բայց շատ չանցած, 1968 թվականին ընտրվեց Գիտական Միությունների Միջազգային Խորհրդի պրեզիդենտ: Ավելին, երկու տարի անց նա նույն պաշտոնում ընտրվեց երկրորդ անգամ, ինչն աննախադեպ էր այդ հեղինակավոր կազմակերպության պատմության մեջ:



1961 he was elected to the position of the President of International Astronomical Union (IAU) and made tremendous efforts for improving its activity. Prof. Jean-Claude Pecker who was serving that time as the Assistant General Secretary of the IAU remembers: "The wise, quite humorous attitude of Professor Ambartsumian cannot be forgotten; he had a very strong influence on world astropolitics. All the astronomers of my generation remember this period with a sort of nostalgia". In 1964 he completed his three year period of presidency in the IAU but very soon, in 1968 he was elected to the post of the President of the International Council of Scientific Unions (ICSU). Moreover, after two years he was elected to this position for the second period which was unexampled event in the history of this prestigious organization.



70-ական թվականների վերջին  
At the end of 70s

Վերլուծելով նրա կյանքը, կարելի է եզրակացնել, որ նա հասել է գիտական բոլոր հնարավոր պաշտոններին, ստացել մեծ թվով մեդալներ ու մրցանակներ, ընտրվել երեք տասնյակ ակադեմիաներ անդամ ներառյալ աշխարհի հինգ խոշորագույն ակադեմիաները, երկու անգամ արժանացել է Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչման, հանրապետության անկախանալուց հետո դարձել Հայաստանի Ազգային Հերոս, միշտ գտնվել սոցիալական սանդղակի վերին դիրքերում:



Մարտիրոս Սարյանի նկարած դիմանկարը  
Portret by Martiros Saryan

Analyzing his life one might conclude that he achieved all the possible scientific positions, won many medals and prizes, was elected to three dozen Academies, including five largest academies of the world, twice was granted the title of Hero of the Socialist Labour, became a National Hero of Armenia after the republic recovered its independence, always occupied very high positions on the scale of ranks.

Այս համառոտ եսսեն սկսվեց Չանդրասեկարի խոսքերով: Այն ավարտին հասցնելու համար պետք է հիշատակել մյուս «խոշոր գիտական այր» Յան Օորտի խոսքերով. «Ես վաղուց եմ դադարել զարմանալ, թե ինչպես են մեկը մյուսի ետևից իրականանում բոլոր վարկածները, որ շատ տարիներ առաջ մարգարեաբար

Վիկտոր Համբարձումյան



Victor Ambartsumian

արել էր Համբարձումյանը”:

This brief essay was started with Chandrasekhar's words. To complete it the statement by the other “great man of science” Jan Oort should be added: “For a long time I ceased to wonder that all the hypotheses prophetically proposed by Ambartsumian many years ago fulfill one by one”.



Նա մահացավ 1996 թվականին և նրա շիրիմը գտնվում է Բյուրականի աստղադիտարանում, որ 1998 թվականից կրում է Վիկտոր Համբարձումյանի անունը:

He passed away in 1996, and his tomb is in the Byurakan observatory which bears Victor Ambartsumian's name since 1998.



Ի տարբերություն նրանց, ովքեր կարծում են, թե բնության գրեթե բոլոր հիմնարար օրենքներն արդեն հայտնի են, և այդ ասպարեզում մնացել է միայն ինչ-որ բաներ լրացնել, ես կարծում եմ, որ XXI դարում հայտնագործվելու են բնության երևույթների սկզբունքորեն նոր ասպեկտներ և որ XXXI դարը նույնպես լեցուն է լինելու նոր հիմնարար հայտնագործություններով:

Վիկտոր Համբարձումյան

In contrast to those who guess that almost all the fundamental laws of Nature are known already and only some gaps remain to fill, I believe that principally new aspects of the Nature phenomena will be discovered in XXI century, and that the XXXI century will be full of new fundamental discoveries as well.

Victor Ambartsumian

